## Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
## անշարժ գույքի շուկան 2013թ. I կիսամյակում

*Հոդվածը ներկայացնում է ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացված, անշարժ գույքի շուկայի մոնիտորինգի /համակարգված դիտարկումներ/ աշխատանքների արդյունքները և նպատակ ունի քաղաքացիներին իրազեկ դարձնելու ԼՂՀ անշարժ գույքի շուկայի իրավիճակին: Հոդվածում ներկայացվող Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում անշարժ գույքի շուկայական գները ձևավորվել են կոմիտեի ստորաբաժանումների կողմից գրանցված առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող անշարժ գույքի գների վերլուծության արդյունքում:*

2013թ. I կիսամյակում կոմիտեի ստորաբաժանումների կողմից իրականացվել է 4470 իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը 2012թ. II կիսամյակի համեմատ նվազել է 2,8%-ով, իսկ 2012թ. I կիսամյակի համեմատ աճել է 2,3%-ով:

Ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների իրականացված գրանցումների ծավալները ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. I և II կիսամյակներում և 2013թ. I կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխություններն՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I կիսամյակ 2012թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2013թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2012թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *1941* | *9,0%* | *2115* | *-3,8%* | *2199* |
| Ասկերան | *585* | *-17,4%* | *483* | *-15,3%* | *570* |
| Մարտունի | *684* | *-19,6%* | *550* | *-4,8%* | *578* |
| Մարտակերտ | *502* | *11,8%* | *561* | *9,6%* | *512* |
| Հադրութ | *249* | *27,3%* | *317* | *20,5%* | *263* |
| Շուշի | *157* | *1,3%* | *159* | *-15,0%* | *187* |
| Քաշաթաղ | *245* | *-7,3%* | *227* | *-13,0%* | *261* |
| Շահումյան | *5* | *11,6անգամ* | *58* | *87,1%* | *31* |
| ***Հանրապետություն*** | ***4368*** | *2,3%* | ***4470*** | *-2,8%* | ***4601*** |

2012թ. I և II կիսամյակներում և 2013թ. I կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխություններն՝ ըստ գործարքների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| ***Գործարքների տեսակները*** | *I կիսամյակ 2012թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2013թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2012թ.* |
|---|---|---|---|---|---|
| ԱՌՈՒՎԱՃԱՌՔ | *818* | *32,4%* | *1083* | *8,6%* | *997* |
| ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ | *286* | *19,9%* | *343* | *-17,5%* | *416* |
| ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ | *470* | *50,9%* | *709* | *64,1%* | *432* |
| ԳՐԱՎԱԴՐՈՒՄ | *702* | *-27,6%* | *508* | *-41,9%* | *874* |
| ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ | *340* | *21,2%* | *412* | *5,9%* | *389* |
| ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ | *29* | *69,0%* | *49* | *2,2անգամ* | *22* |
| ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ | *144* | *-52,1%* | *69* | *-21,6%* | *88* |
| ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄ | *25* | *-36,0%* | *16* | *-23,8%* | *21* |
| ԱՌԱՋՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄ | *625* | *-45,1%* | *343* | *-22,0%* | *440* |
| ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ | *18* | *-38,9%* | *11* | *-71,1%* | *38* |
| ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ | *215* | *-31,6%* | *147* | *-11,4%* | *166* |
| ԱՅԼ ԳՐԱՆՑՈՒՄ | *562* | *7,3%* | *603* | *6,5%* | *566* |
| ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐՈՒՄ | *134* | *32,1%* | *177* | *16,4%* | *152* |
| ***Ընդամենը*** | ***4368*** | *2,3%* | ***4470*** | *-2,8%* | ***4601*** |

2013թ. I կիսամյակում հանրապետությունում ընդհանուր առմամբ իրականացվել է 1083 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ կիսամյակի համեմատ աճել է 8,6%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 32,4%-ով, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել է 313, իսկ բնակելի տների նկատմամբ՝ 81 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում:

2012թ. I և II կիսամյակներում և 2013թ. I կիսամյակում Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխություններն ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I կիսամյակ 2012թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2013թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2012թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *272* | *98,2%* | *539* | *6,3%* | *507* |
| Ասկերան | *151* | *-48,3%* | *78* | *-45,8%* | *144* |
| Մարտունի | *186* | *-51,6%* | *90* | *28,6%* | *70* |
| Մարտակերտ | *68* | *2,6անգամ* | *179* | *92,5%* | *93* |
| Հադրութ | *67* | *-37,3%* | *42* | *-25,0%* | *56* |
| Շուշի | *35* | *40,0%* | *49* | *-5,8%* | *52* |
| Քաշաթաղ | *34* | *2,1անգամ* | *71* | *29,1%* | *55* |
| Շահումյան | *5* | *7,0անգամ* | *35* | *75,0%* | *20* |
| ***Հանրապետություն*** | ***818*** | *32,4%* | ***1083*** | *8,6%* | ***997*** |

2012թ. I և II կիսամյակներում և 2013թ. I կիսամյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակները և նրանց փոփոխությունները՝ ըստ անշարժ գույքի առանձին տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| N | *Անշարժ գույքի տեսակները* | *Առուվաճառքի գործարքների քանակը* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *I կիսամյակ 2012թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2013թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2012թ.* |
| 1 | ***բազմաբնակարան շենքի բնակարաններ*** | *147* | *2,1անգամ* | *313* | *14,2%* | *274* |
| 2 | ***առանձնատուն*** | *94* | *-13,8%* | *81* | *-36,2%* | *127* |
| 3 | ***արտադրական նշ. օբյեկտ*** | *43* | *-58,1%* | *18* | *-21,7%* | *23* |
| 4 | ***հասարակական նշ. օբյեկտ*** | *58* | *6,9%* | *62* | *-12,7%* | *71* |
| 5 | ***ավտոտնակ*** | *9* | *8,0անգամ* | *72* | *80,0%* | *40* |
| 6 | ***հողամաս*** | *467* | *15,0%* | *537* | *16,2%* | *462* |
| | ***Ընդամենը*** | ***818*** | *32,4%* | ***1083*** | *8,6%* | ***997*** |

2013թ. I և 2012թ II կիսամյակներում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և բնակելի տների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների և կոմիտեի կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի դիտարկումների արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական նվազագույն, առավելագույն և միջին գները ու նրանց փոփոխումները :

***Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների***

| *Քաղաքներ* | *2012թ. II կիսամյակ* | | | *2013թ. I կիսամյակ* | | | *փոփոխումը 2012թ. II կիսամյակի նկատմամբ նվազագույնը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *1 քմ արժեքը /ՀՀ դրամ/* | | | *1 քմ արժեքը /ՀՀ դրամ/* | | | |
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | |
| Ստեփանակերտ | 170 000 | 320 000 | ***245 000*** | 200 000 | 335 000 | **267 500** | ***9,2%*** |
| Ասկերան | 42 000 | 55 500 | ***48 750*** | 45 000 | 60 000 | **52 500** | *7,7%* |
| Մարտունի | 38 000 | 50 000 | ***44 000*** | 41 700 | 54 000 | **47 850** | ***8,7%*** |
| Մարտակերտ | 15 000 | 29 500 | ***22 250*** | 15 900 | 31 000 | **23 450** | ***5,4%*** |
| Հադրութ | 20 000 | 29 000 | ***24 500*** | 22 000 | 30 500 | **26 250** | *7,1%* |
| Շուշի | 50 000 | 92 000 | ***71 000*** | 55 000 | 97 500 | **76 250** | *7,4%* |

***Բնակելի տներ***

| *Քաղաքներ* | *2012թ. II կիսամյակ* | | | *2013թ. I կիսամյակ* | | | *փոփոխումը 2012թ. II կիսամյակի նկատմամբ նվազագույնը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /ՀՀ դրամ/* | | | *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /ՀՀ դրամ/* | | | |
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | |
| Ստեփանակերտ | 22 500 000 | 38 000 000 | ***30 250 000*** | 25 500 000 | 39 300 000 | **32 400 000** | *7,1%* |
| Ասկերան | 4 100 000 | 4 800 000 | ***4 450 000*** | 4 450 000 | 5 200 000 | **4 825 000** | ***8,4%*** |
| Մարտունի | 3 300 000 | 4 300 000 | ***3 800 000*** | 3 500 000 | 4 620 000 | **4 060 000** | ***6,8%*** |
| Մարտակերտ | 1 650 000 | 2 900 000 | ***2 275 000*** | 1 800 000 | 3 100 000 | **2 450 000** | *7,7%* |
| Հադրութ | 1 500 000 | 2 900 000 | ***2 200 000*** | 1 550 000 | 2 855 000 | **2 202 500** | ***0,1%*** |
| Շուշի | 2 800 000 | 6 000 000 | ***4 400 000*** | 3 000 000 | 6 500 000 | **4 750 000** | *7,9%* |

2013թ- I կիսամյակում հանրապետությունում իրականացվել է 709 վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ կիսամյակի համեմատ աճել է 64,1%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 50,9%-ով:

Վարձակալության գործարքների քանակների փոփոխությունները՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2012թ. I և II կիսամյակներում և 2013թ. I կիսամյակում ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I կիսամյակ 2012թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2013թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2012թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *47* | *-27,7%* | *34* | *-29,2%* | *48* |
| Ասկերան | *92* | *43,5%* | *132* | *94,1%* | *68* |
| Մարտունի | *165* | *21,8%* | *201* | *5,2%* | *191* |
| Մարտակերտ | *18* | *2,9անգամ* | *53* | *2,0անգամ* | *26* |
| Հադրութ | *48* | *3,3անգամ* | *159* | *3,6անգամ* | *52* |
| Շուշի | *4* | *0,0%* | *4* | *-60,0%* | *10* |
| Քաշաթաղ | *96* | *16,7%* | *112* | *3,4անգամ* | *33* |
| Շահումյան | *0* | *14-ով ավել* | *14* | *3,5անգամ* | *4* |
| ***Հանրապետություն*** | ***470*** | *50,9%* | ***709*** | *64,1%* | ***432*** |

2013թ. I կիսամյակում հանրապետությունում գրանցվել է 7 422,3085 հա ընդհանուր մակերեսով, գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության 627 գործարքներ, որոնց քանակը և մակերեսները՝ ըստ հանրապետության շրջանների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | ***2013թ. I կիսամյակում վարձակալված հողամասերի*** | |
|---|---|---|
| | ***քանակը*** | ***մակերեսը /հա/*** |
| *Ասկերան* | *125* | *772,836* |
| *Մարտունի* | *186* | *984,8* |
| *Մարտակերտ* | *42* | *463,73* |
| *Հադրութ* | *157* | *1360,87* |
| *Շուշի* | *1* | *2,2425* |
| *Շահումյան* | *6* | *51,9* |
| *Քաշաթաղ* | *110* | *3 785,93* |
| ***Հանրապետություն*** | ***627*** | ***7 422,3085*** |

Հանրապետությունում անշարժ գույքի շուկայի դիտարկումները ցույց են տալիս, որ վարձակալության համար, որպես ակտիվ անշարժ գույքի տեսակներ, հանդես են գալիս Ստեփանակերտում՝ հասարակական նշանակության օբյեկտները, իսկ շրջաններում՝ գյուղատնտեսական նշանակության հողամասերը:

2013թ I կիսամյակում հանրապետությունում իրականացվել է 508 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ կիսամյակի համեմատ նվազել է 41,9%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՝ 27,6%-ով:

2012թ. I և II կիսամյակներում և 2013թ. I կիսամյակում գրավադրման գործարքների քանակների փոփոխությունններն՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I կիսամյակ 2012թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2013թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2012թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *365* | *-4,1%* | *350* | *-33,3%* | *525* |
| Ասկերան | *94* | *-61,7%* | *36* | *-63,3%* | *98* |
| Մարտունի | *128* | *-68,0%* | *41* | *-63,7%* | *113* |
| Մարտակերտ | *44* | *-18,2%* | *36* | *-37,9%* | *58* |
| Հադրութ | *26* | *-42,3%* | *15* | *-60,5%* | *38* |
| Շուշի | *38* | *-31,6%* | *26* | *-27,8%* | *36* |
| Քաշաթաղ | *7* | *-42,9%* | *4* | *-33,3%* | *6* |
| ***Հանրապետություն*** | ***702*** | *-27,6%* | ***508*** | *-41,9%* | ***874*** |

2013թ. I կիսամյակում հանրապետությունում իրականացվել է 109 սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը նախորդ կիսամյակի համեմատ նվազել է 22,0%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 49,7%-ով:

Սնփականաշնորհման և մասնավորեցման գործարքների քանակների փոփոխությունները՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2012թ. I և II կիսամյակներում և 2013թ. I կիսամյակում, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I կիսամյակ 2012թ.* | *փոփոխումը* | *I կիսամյակ 2013թ.* | *փոփոխումը* | *II կիսամյակ 2012թ.* |
|---|---|---|---|---|---|
| *Ստեփանակերտ* | *133* | -49,6% | *67* | -11,8% | *76* |
| *Ասկերան* | *5* | -40,0% | *3* | -80,0% | *15* |
| *Մարտունի* | *8* | -75,0% | *2* | -50,0% | *4* |
| *Մարտակերտ* | *3* | 66,7% | *5* | -54,5% | *11* |
| *Հադրութ* | *4* | 0,0% | *4* | 4-ով ավել | *0* |
| *Շուշի* | *16* | -81,3% | *3* | 50,0% | *2* |
| *Քաշաթաղ* | *0* | 1-ով ավել | *1* | 0,0% | *1* |
| ***Հանրապետություն*** | ***169*** | -49,7% | ***85*** | -22,0% | ***109*** |

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«Գնահատման և համակարգված դիտարկումների բաժին»
ՀԵՌ : 95-17- 49